


Կ. ԴԱՐՅԱՆ

ՀԱՅԳԻՏԱԿԱՆ ԹԱՂԱՐԱՆՆԵՐԸ
ՅԵՎ ՊԱՏՄԱԿԱՆ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԻ
ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ
ԽՆԴԻՐՆԵՐԸ



ՅԵՐԵՎԱՆ

ԼՈՒՍՅՐԱՏ

1940

5 OCT 2011

ՀԱՅԿԱԿԱՆ ԽՍՀ ԼՈՒՍԺՈՂԿՈՂԱՐԱՏ

ՊԱՏԽԱԿԱՆ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵ

902.6
7-27

48

Վ. ԴԱՐՅԱՆ

ՀՆԱԳԻՏԱԿԱՆ ԹԱՆԳԱՐԱՆՆԵՐԸ

Յ Ե Վ

ՊԱՏՄԱԿԱՆ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԻ
ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

29 MAR 2013

Խմբագրությանը՝ ղոկսոր—պրոֆեսոր
Սմբատ Վ. Տեր—Ավետիսյանի



2112 9
40

Ն Ա. Խ Ա. Բ Ա. Ն

Մեր յերկիրը պատմական մեծ անցյալ ունի նրա պատմութունն սկսվում է այն որվանից, չերբ յերկրի վրա առաջանում է մարդկությունը։ Ահա թե ինչու ամեն տեղ, թե արևակեզ դաշտավայրերում և թե զովաշունչ լեռներում, հաճախ ենք հանդիպում անցյալ հին-հին դարերի պատմական արժեքավոր հուշարձանների՝ զեանի յերեսին, կանգուն թե ավերակ, կամ զետնի տակ։ Այդ հուշարձանները պատմում են մեզ նախնադարյան հասարակության՝ քարայրերում անցկացրած կյանքի ու կենցաղի մասին, վորոնց թիվը մեր լեռնաշխարհում, անմատչելի ժայռերի մեջ, բազմաթիվ է։

Նրանք պատմում են մեզ ուրարտական տիրակալների նվաճողական քաղաքականության մասին, արաբական, հունահելլենական, հռոմեական, թյուրք-սելջուկների բազմաթիվ արշավանքների և ազատատենչ հայ ժողովրդի հերոսական պայքարի մասին ոտարերկրյա զոռոզ բռնակալների նվաճողական քաղաքականության դեմ։

Այդ հուշարձանները մեզ պատմում են նաև հայ աշխատավոր ժողովրդի ընդվզումների և ցասմալից յեղույթների մասին՝ ուղղված հայ ֆեոդալների՝ այդ ժանտ բռնակալների դեմ, հայ յեկեղեցու ճնշման և շահագործման դեմ։ Վերջապես, այդ հուշարձանները պատմում են մեզ հայ աշխատավոր ժողովրդի պայքարի մասին՝ ռուսական ցարիզմի և կապիտալիզմի լուծը թոթափելու համար, արևաշող ներկայի և պայծառ ապագայի համար։

Ահա թե ինչու պատմական հուշարձանների պահպանության գործը մեզ մոտ խոշոր կուլտուրական—քաղաքական նշանակություն է ըստացել և այդ գործի մեջ են ներգրավվել հազարավոր մարդիկ։

Համաձայն Հայկական ԽՍՀ Ժողկոմիտեի վորոշման, բոլոր հուշարձանները, ինչպիսիք վիճակում ել նրանք լինեն՝ «կանգուն, կիսավեր կամ բոլորովին ավերակ, առանձին, թե խմբված ձևով, իրենց ամբողջ շրջաններով՝ այսինքն՝ նախկին բնակիչության վայրերը—քաղաքատեղեր, գյուղատեղեր, ամրոցներ, վանքեր, այլ և այլ կերտվածքներ՝ լինեն նրանք գետնի լերեսին, թե հողով ծածկված, իրենց նախկին տեղերում, թե առաջուց տեղահան արված, կազմում են պետական սեփականություն և պետք է մնան միան-

գամայն անաղարտ և անձեռնմխելի»։ Ամեն մի պատմական հուշարձան մի թանգարան է։ Հրակայական թվով դիտնականներ, ռուսացիչներ, բանվորներ և կոլտնտեսականներ ամեն տարի այցելում են մեր հուշարձանները։ Այս տեսակետից անհրաժեշտ է վնչ միայն այդ հուշարձանները լավ պահպանել, այլ և այնպես ձևավորել, վոր նրանք արտահայտեն իրենց եպոխան ամբողջությամբ, իրենց պատմությունը բազմակողմանիորեն։ Այլ կերպ ասած, պետք է յուրաքանչյուր հուշարձան՝ ամրոց, յեկեղեցի և այլն, համապատասխանորեն ձևակերպել։ Հայաստանում մենք ունենք բազմաթիվ կրոնական հուշարձաններ, զրանք պետք է այնպես ձևավորել հակակրոնական բովանդակությամբ, վոր յերեվա յեկեղեցու և հոգեվորականության շահագործողական դերը մեր ժողովրդի պատմության մեջ, և պետք է ցույց տալ, վոր սվյալ յեկեղեցի—հուշարձանը պահվում է վորպես սվյալ դարի ճարտարապետական կոթող և վոչ թե վորպես կրոնական հուշարձան։ Սակայն այս բավական չէ։

Հայկական ԽՍՀ Լուսժողկոմատի կողմից վորոշմամբ, 1940 թվի ընթացքում, տասը շրջանների կենտրոններում պետք է կազմակերպվեն թանգարաններ։

Այս թանգարանները լինելու յեն այն կուլ-

տուրական ոջախները, վորոնց շուրջը համախմբվելու յեն մեր անցյալ պատմութիւնն ուսումնասիրող մասսաները:

Շրջանային այդ թանգարանները խոշոր քաղաքական աշխատանք պետք է ծավալեն պատմական հուշարձանների պահպանութեան շուրջը, այդ գործը, հիմնարկների նեղ շրջանակներից հանելով, մասսայական գործ պետք է դարձնել:

Պատմական հուշարձանների պահպանութեան գործով պետք է զբաղվեն ժողկրթբաժինները (քաղուստեսուչները, դպրոցական տեսուչները), ակումբները, խրճիթ-ընթերցարանները, ուսուցիչները, աշակերտները, կոմյերիտական կազմակերպութիւնները, պիոներները:

Շրջանի անցյալ պատմութիւնն ուսումնասիրելու տեսակետից, խոշոր նշանակութիւն ունեն շրջանային հնագիտական թանգարանները: Աշխատանքը թանգարանում պետք է կազմակերպել հետաքրքիր և զբաղիչ ձևով, այն ժամանակ կարելի յե ասել, վոր մասսաները կ'սիրեն այդպիսի թանգարանը և կ'աշխատեն նրա հետ:

Այս աշխատանքով պետք է անհապաղ զբաղվեն ժողկրթբաժինները, շրջանային կուսակցական կազմակերպութիւնները և շրջգործկոմիները:

Այս բրոշյուրը, վորը միաժամանակ այդ գոր-

ծով զբաղվողներին ուղղված մի հրահանգ է, գեթ մասամբ կ'ոժանդակի մեր շրջանային աշխատողներին՝ հնագիտական թանգարանների կազմակերպումը և պատմական հուշարձանների պահպանութիւնը ճիշտ և ավելի լավ հիմքերի վրա դնելու գործում:

ՀՆԱԳԻՏԱԿԱՆ ԹԱՆԳԱՐԱՆՆԵՐԸ ՅԵՎ ՊԱՏՄԱԿԱՆ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

I

Պատմական գիտությունը խորհրդային Յերկրում դրված է աշխարհի բարձրության վրա, վերադարձված բարձրության վրա նա յերբեք չի լեղել և կարող էլ չե դրվել վոչ մի կապիտալիստական յերկրում:

Խորհրդային ժողովուրդը ջերմ սիրով է տոգորված դեպի իր մայր հայրենիքը, սիրում է և ուսումնասիրում իր յերկրի անցյալ պանծալի պատմությունը, հեղափոխությունների և քաղաքացիական հերոսական կռիվների փառավոր եջերը:

Համաժողովրդական Կոմունիստական (բոլշևիկների) Մեծ Կուսակցության 18-րդ համագումարը և Մեծ առաջնորդ ընկեր ՍՏԱԼԻՆԸ ուրվագծել են մեր յերկրի ժողովուրդների պատմության ուսումնասիրության և այդ պատմությունը գիտենալու ուղիները:

Խորհրդային կառավորության ղեկավար ընկեր Վ. Մ. Մոլոտովը 18-րդ համագումարի իր զեկուցման մեջ ասել է.

«Պե՛սք ե՛ս, առանց ուժերը խնայելու, ուսումնասիրել կույսուրական ժառանգությունը: Պե՛սք ե՛ս գիտենալ այն լրջորեն ու խորապես: Պե՛սք ե՛ս ոգսագործել այն ամենը, ինչ վոր Տվել է կապիտալիզմը յե՛վ մարդկության նախընթաց պատմությունը, յե՛վ այն աղյուսներից, վորոնք ստեղծված են ռաս դարերի ընթացքում, մարդկային աշխատանքով, կառուցել ժողովրդի կյանքի համար հարմար, ընդարձակ, լույսով ու արե՛վով լի մի նոր շենք...» (Վ. Մ. Մոլոտով. գեկ. 18-րդ կուսհամագումարում, էջ 86):

Ահա թե ինչպիսի մեծ նշանակություն է տալիս մեր կուսակցությունը և Խորհրդային կառավարությունը մեր յերկրի անցյալ պատմության հերոսական եջերն ուսումնասիրելու խընդրին:

Դեռ 1920 թվին Վ. Ի. Լենինը հանձարեզորեն զրեց անցյալ դարերի ընթացքում ըստեղծված մարդկային կուլտուրայի յուրացման

խնդիրը: Այն ժամանակ Ռուսաստանի Յերիտասարդության Կոմունիստական Միության Համառուսական Յ-րդ համագումարում, «Յերիտասարդության միությունների խնդիրների» մասին արտասանած իր ճառում, ընկեր Լենինն ասել է.

«Առանց պարզ հասկանալու այն, վոր մարդկության ամբողջ զարգացումով ըստեղծված կույսուրայի հիւս ըմբռնամբ, նրա վերամեակմամբ միայն կարելի յէ կառուցել պրոլետարական կույսուրա—առանց այս հասկանալու, մենք այդ խնդիրը չենք լուծի»:

(Լենին, Ընտիր յերկեր 2-րդ հատր, էջ 652—653):

Մեծ Լենինի գործը շարունակող ամբողջ աշխարհի ժողովուրդների հանճարեղ առաջնորդ ընկ. ՍՏԱԼԻՆԸ մեզ սովորեցնում է, վոր՝ «Վերափոխել իրականությունը կարելի յէ միայն այն ժամանակ, յերբ մենք այն հանաչում ենք»:

Ահա թե ինչն ալժամ Խորհրդային վողջ ժողովուրդը, ինտելիգենցիան, յերիտասարդությունը, կոլտնտեսականները մեծ խանդավառությամբ ու բուռն սիրով ուսումնասիրում են Սոցիալիզմի Յերկրի սքանչելի պատմությունը:

չափան նշանակութիւնն ունեն: Այդ տեսակեօրց
անհրաժեշտ եւ, վոր այդ աշխատանքը չկատարվի
մեկուսացված, այլ ամենատարբեր կերպով կապ-
ված լինի լայն մասսաների հետ: Թանգարանի
բոլոր կազմակերպչական հարցերը, ցուցադրման
պլանները պետք ե համաձայնեցնել ե քննու-
թյան դնել շրջանի լուսավորության որդանների,
տեղական աշխատավորական Խորհուրդների կուլտ-
-կութիւնի սեկցիաների, կուսակցական ե կոմ-
-յերիտական կազմակերպութիւնների հատուկ
խորհրդակցութիւններում:

Այսպիսով, ստեղծելով լայն հասարակայնութիւն
հնազիտական թանգարանի շուրջը, հնարավոր
կլինի աշխատանքներն ավելի լավ ե լուրջ կազ-
մակերպել, ավելի հարուստ թանգարան ունենալ:

Շրջանային հնազիտական թանգարանները
պետք ե պատկերացնեն շրջանի անցյալ պատ-
մութիւնը—հասարակական հարաբերութիւնները
ե հետագա պատմական շրջանները—աճն կոթող-
ներով, պատմական հուշարձաններով ե պատմա-
կան հիշատակարաններով, վորոնք գոյութիւն
ունեն տվյալ շրջանում, վորոնք կանգուն են կամ
հայտնաբերված են հնազիտական պեղումների
ժամանակ:

Հայաստանի բոլոր շրջաններում ունենք առատ
ու բազմաբովանդակ նյութ, թանգարաններում

ցուցադրելու համար: Միայն անհրաժեշտ ե այս
գործի մեջ առաջ քաշել նախաձեռնող ե կարող
ուժեր:

Վոր շրջանում ասես, վոր չկան պատմական
կոթողներ, հին դամբարաններ, խաղական հուշար-
ձաններ, ֆալուսներ, վիշապներ, հին գրամներ,
հին կամուրջներ, բազմաթիվ հին արձանագրու-
թիւններ, ձեռագրեր, հին բնակավայրեր, պատ-
մական ամրոցներ, ինչպես նաեւ բազմաթիվ
պատմական իրեր ե արժեքավոր բեկորներ:

Յուրաքանչյուր շրջանում, յերբ այս բոլորը
խնամքով կհավաքվի, միանգամայն հնարավոր
կլինի այն գիտական վերամշակման յենթարկե-
լուց հետո կազմակերպել թանգարանի գիտական
եմպոզիցիան—ցուցադրումը:

Այսպիսով շրջանում, նույնիսկ ամեն մի գյու-
ղում, կարելի յե ունենալ փոքրիկ, բայց հետա-
բրբիւր ձեով կազմակերպված տեղական հնազի-
տական-պատմական թանգարան:

IV

Այժմ Խորհրդային Հայաստանում մենք ունենք
շրջանային հնազիտական պատմական թանգա-
րաններ միմիայն Վաղարշապատում, վորոնցից

մեկը՝ Վաղարշապատի շրջանային հնագիտական պատմական թանգարանն է (նախկին, այսպես կոչված, Հոփսիմեյի հուշարձանին կից) և մյուսը Ձվարթնոցի թանգարանը: Այս թանգարանները հսկայական աշխատանք են կատարել շրջանի անցյալ պատմության ամենակարևոր և արժեքավոր մնացորդները հավաքելու, ցուցադրելու և պահպանելու գործում: Այս թանգարանների փորձը ցույց է տալիս, թե ինչպիսի խոշոր նշանակություն ունի անցյալի բազմաթիվ թանկարժեք հիշատակարանների, բեկորների, պատմության շատ կարևոր հուշարձանների պահպանության խնդրում շրջանային լավ կազմակերպված հնագիտական թանգարանը: Յեթնելով այս փորձից և գործի կարևորությունից՝ Լուսավորության ժողովրդական կոմիտեի ատի կողմից 1939 թվի նոյեմբերին փորձում են դրանց և հանձնարարեց պատմական հուշարձանների կոմիտեյին նման թանգարաններ կազմակերպել Հայաստանի տասը շրջաններում:

Հետագա տարիներին հնարավոր կլինի կազմակերպել այդպիսի թանգարաններ նաև մյուս շրջաններում:

Շրջանային հնագիտական թանգարանում պետք է կենտրոնացնել տվյալ շրջանի բոլոր պատմական հուշարձանների մասսայական պահ-

պանության գործը, փորը պետք է կազմի շրջանային թանգարանի ընդհանուր աշխատանքների պլանի անքակտելի մասնիկը: Այսպիսով, շրջանային հնագիտական թանգարանը կդառնա հրաշքների պահպանության կենտրոնական գործոնը տվյալ շրջանում, փորը ի վիճակի կլինի կազմակերպել նաև լայն մասսաները շրջանի հնությունների պահպանության շուրջը, ծավալելով լայն կուլտուր-կրթական աշխատանք այդ բնագավառում, մոբիլիզացիայի յենթակից ուսուցիչներին, աշակերտներին, պիոներական և, փոր գլխավորն է, կոմյերիտական կազմակերպությունները:

Կոմյերիտականությունը յեղել է և պետք է լինի պատմական հուշարձանների պահպանության շեֆը, մեր հայրենիքի անցյալ պատմության հոյակապ կոթողների ջերմ պաշտպանը և պահպանության գործի գլխավորողն ամեն մի շրջանում:

Շրջանային հնագիտական թանգարանում պետք է հավաքվեն բոլոր այն պատմական իրերը, փորոնք անխնամ ընկած են՝ գլխավորապես նախկին վանքերում, լեկեղեցիներում:

Սակայն յուրաքանչյուր արժեքավոր իր, յերբ բերվում է շրջանային թանգարան, պետք է համապատասխան կարգով գրանցվի, մանրամասն նկարագրվի՝ նշելով թե՛ փորանդից է բերված,

և թե ինչ վիճակում ե յեղել յուր տեղը և այլն։ Ամեն տեսակի իբ չի կարելի փոխադրել շրջանային թանգարան. այդ տեսակետից անհրաժեշտ է յուրաքանչյուր կոնկրետ դեպքում հարցնել պատմական հուշարձանների պահպանության կոմիտեյին և վերջինիս հասուկ քուլտուրյամբ միայն կատարել այդ փոխադրումը։

Չպետք է մոռանալ, Վոր յուրաքանչյուր հուշարձան, վորտեղ ուզում ե այն լինի, նույնպես հնագիտական մի քանգաւում ե։ Հենց այդ տեսակետից ել, բոլոր հուշարձանները պետք ե այնպես ձևակերպվեն, վոր այցելուին լրիվ պատկերացում ունենա տվյալ հուշարձանի ծագման, ժամանակի, պատմական դերի, ճարտարապետական արժեքի, պահպանության նպատակի մասին։ և այլն։ Ահա թե ինչնու բոլոր հուշարձանները պետք ե ունենան բացատրական տախտակներ։ Բացի դրանից, առանձնապես պետք ե ուշադրություն դարձնել վոր անցյալի կրոնական վորոշ հուշարձաններ (յեկեղեցի, մատուռ) դադարեն սրբավայր լինելուց, ինչպես մինչև վերջին ժամանակներս դեռ կարելի յեր նկատել մի շարք վայրերում, որինակ՝ Աշտարակի շրջանում Փարպիի ս. Գրիգորի մենաստանը, Բյուրականի հուշարձանը (նախկին յեկեղեցին), Աղարանի Մուսլյան դղուղի հուշարձանը և այլն։

22

Անհրաժեշտ ե ծավալել լայն հակակրոնական աշխատանք այդ տիպի հուշարձանների շուրջը և ձևավորել այդպիսի հուշարձանները գիտական, հակակրոնական բովանդակությամբ, պատուել այդ «սրբավայրերի» շուրջը հորինված կրոնական շղարշը, վերացնել նախապաշարմունքները, ցույց տալ յեկեղեցու շահագործողական, հակաժողովրդական, հակագիտական դեմքը։ Այդ բանը կարելի յե ցուցադրել հենց տվյալ հուշարձանում՝ զանազան բացատրական տախտակներով, դիագրամներով, նկարներով և վերջապես մասսայական դասախոսութույուններ կազմակերպելու միջոցով։

Այս աշխատանքները պետք ե նույնպես գրականով, կազմակերպի և դեկլամարի շրջանային հնագիտական թանգարանը, ժողովրդական կրթության որդանների միջոցով, իսկ վորտեղ թանգարան չկա՝ տեղի ժողկրթբաժինը՝ հուշարձանների պահպանության շրջանային լիազորի միջոցով, վորին պետք ե ոգնի և ոժանդակի նաև քաղուս աշխատանքների տեսուչը։

V

Շրջանային թանգարան կազմակերպելու առաջին և կարևոր նախապայմաններից մեկը համապատասխան շենք ունենալու խնդիրն ե։

Այդպիսի շենքեր բոլոր շրջաններում կան։
Դրանք հենց պատմական հուշարձանների շեն-
քերն են։ Հաճախ այդ հուշարձանների շենքերը
չափ հարմար են լինում շրջանային հնագիտա-
կան-պատմական թանգարաններ կազմակերպելու
համար։

Բայց այս չի նշանակում, վոր հնագիտական
թանգարանը կարող է միմիայն կազմակերպվել
պատմական հուշարձանի շենքում։ Բոլորովին վրի-
ն։ Այդ «հնագիտական» անվանած թանգարանը
կարող է, և հնարավորության դեպքում անպաշ-
տան պետք է կազմակերպվել մի ավելի հարմար,
բնակավայրի կենտրոնում գտնվող լուսավոր շեն-
քում։

Այդ կախված է շրջանային կազմակերպու-
թյունների նախաձեռնությունից և դեպի նման
թանգարան կազմակերպելու գործն ունեցած վե-
րաբերունքից։

Այսպիսով, շենքի տեսակետից, կարելի չէ ա-
սել, վոր բոլոր մեր շրջաններն ապահով են։

Շրջանային հնագիտական-պատմական թան-
գարանը հուշարձանի շենքում կազմակերպելու
դեպքում, անհրաժեշտ է վորոշ չափով և հնա-
րավորության սահմաններում նվազագույն հար-
մարություններ ցուցադրել այդ շենքերում և
հատուկ կահավորում ձեռք բերել։

Շրջանային թանգարանների կազմակերպման
և դեկավարման ամբողջ պատասխանատվությունը
կրում են շրջանային գործադիր կոմիտեների
ժողկրթության բաժինները, իսկ անհատապես
այդ գործով լրջորեն յեղ ավելի հաւատեմ պետք
է զբաղվեն պատմական հուշարձանների պահ-
պանության շրջանային հրահանգիչները, վորոնք
և այդ աշխատանքների համար պատասխանատու
յեն պատմական հուշարձանների պահպանության
հանրապետական կոմիտեի առաջ։

VI

Յուրաքանչյուր թանգարանի կազմակերպման
հիմքում դրված է այդ թանգարանի պրոֆիլին
համապատասխան գիտական եխպոզիցիոն պը-
լանը։

Շրջանային հնագիտական-պատմական թան-
գարանի եքսպոզիցիոն պլանը բավական պարզ
է, վորովհետև այստեղ մենք գործ ունենք մեկ
հիմնական եխպոզիցիայի հետ. դա՛ շրջանի
պատմական անցյալի ցուցադրումն է, հիմնված
նյութական կուլտուրայի հուշարձանների ցու-
ցադրման վրա։ Սակայն այստեղ ևս մենք գործ
ուենք ցուցադրման լուրջ յեղ խոր ուսումնա-
սիրման հետ։ Այս դեպքում ևս գործին թեթի,

մտկերեսային մոտեցում ունենալու դեպքում հակառակ արդյունք կստացվի:

Թանգարանի եքսպոզիցիոն պլանի մշակման վրա պետք է լուրջ աշխատել, ոգնության կանչել շրջանի գիտական և կարող ուժերին: Այդ մեկ կամ յերկու որվա գործ չէ:

Զպետք է մոռանալ, վոր լավ Թանգարանն ստեղծվում է ամիսներին և տարիներին ընթացքում: Միանգամից Թանգարանը չի ստեղծվում: Սակայն այդ չի նշանակում, վոր պետք է ձեռքերը ծալել և սպասել, մինչև Թանգարանն ինքն իրեն ստեղծվի: Պետք է աշխատել թևերը քշած, բուլեծվիկյան հետեվողականությամբ, լրջորեն յեվ համառությամբ. այն ժամանակ միայն կըլինեն բոլոր հավաստիքները, վոր Թանգարանը կկազմակերպվի:

Հնագիտական-պատմական Թանգարանի ամբողջ ցուցադրումը պետք է հագեցված լինի հակա-կրոնական բովանդակությամբ:

Այս հիմնական սկզբունքից յեղնելով, պետք է կազմել Թանգարանի եփսպոզիցիոն պլանը:

Ի՞նչ ելեմենտներից պետք է կազմված լինի այդ պլանը:

Ամենից առաջ հնագիտական-պատմական Թանգարանը պիտք է բաղկացած լինի հետևյալ յեն-թարածիւններից.

1. ՊԱՏՄԱԿԱՆ

Պատմական տեղեկություններ շրջանի անցյալ պատմության մասին, համաձայն հայ և այլազգի հին պատմագիրների աղբյուրների:

2. ԴԱՄԲԱՐԱՆՆԵՐ ՅԵՎ ԹԱՂՄԱՆ ՀԻՆ ՁԵՎԵՐ

Սրանք հնագույն հասարակություններում գոյություն ունեցող թաղման ձևեր են, վորոնց ուսումնասիրությունը շատ կարևոր է, այն ժամանակվա կենցաղի, արվեստի, տեխնիկայի և մի շարք այլ խնդիրներ պարզելու տեսակետից: Դամբարանային հուշարձաններն են՝ կրոմլեխները, Դոլմենները, Մենհիրները վորոնք տարածված են Հայաստանի մի շարք շրջաններում՝ դաշտերում և լեռների վրա: Այս հուշարձանները նույնպես հնարավոր է ցուցադրել միմիային լուսանկարներով: Բացառիկ դեպքերում, Թանգարան այցելողներին լրիվ և ճիշտ պատկերացում տալու համար, թե ի՞նչ են այդ հուշարձանները, կարելի չէ ուղղակի տալ դրանց մակետը:

3. ՏՈՏԵՄԱԿԱՆ ՅԵՎ ՊԱՇՏԱՄՈՒՆՔԻ ԱՅԼ ՄՆԱՑՈՐԴՆԵՐ

Այս յենթաբաժնում պետք է ցույց տալ պաշտ-վող ծառեր, պաշտարներ, վիճապնե, Քալուս-

ներ: Այստեղ ևս պետք է ասել, վոր վորոշ դեպքերում հնարավոր է ցույց տալ խնկական հուշարձանը, որինակ՝ պորտաքարերը, ֆալուսը, վիշապը: Ինչ վերաբերվում է պաշտվող ծառերին — կարելի է ցուցադրել լուսանկարը:

4. ԿԵՆՑԱՂԻ ԻՐԵՐ ՑԵՎ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԻՔՆԵՐ

Հնագիտական նշանակություն ունեցող վայրերի պեղումների ժամանակ հայտնաբերվում են բազմաթիվ ամեն տիպի տնային կահ-կարասիների մնացորդներ՝ ֆաբից, կավից, մետաղից, նաև անցյալին պատկանող արտադրության դորձիքներ՝ ֆաբից, վոսկրից, մետաղից, փայտից, և այլ իրեր:

Այդ բոլոր իրերը պետք է խնամքով հավաքել և ցուցադրել շրջանային հնագիտական թանգարանում:

Վերջապես, ինչո՞ւ միայն պեղումներից ստացած իրերը ցուցադրել: Պետք է հավաքել շրջանում գտնվող, թեկուզ անհատների մոտ, պատահաբար գտնված բոլոր այն իրերը, վորոնք վերաբերվում են շրջանի անցյալ կյանքին՝ կենցաղին և արտադրությանը:

5. ԱՐԴՈՒՋԱՐԴԻ ԻՐԵՐ

Այս լենթաբաժնի ցուցադրումը դարձյալ սերտ կերպով կապված է պեղումների հետ, վորովհետև արդուզարդի բոլոր իրերը հնարավոր է ձեռք բերել մեծ մասամբ պեղումների միջոցով: Սակայն այս չի նշանակում, վոր տեղական ազգաբնակչության մոտ չի կարելի հայտնաբերել նշման իրեր, վորոնք հաճախ պատահաբար, դաշտում վար անելիս կամ զանազան հողային աշխատանքներ կատարելիս, ձեռք են բերում այդ իրերը: և չիմանալով՝ ու՞մ հանձնեն, դրանք հաճախ կորչում են: Այդ իրերն են՝ ուլունքներ, մատանիներ, ապարանջաններ, մանյակներ, ճիճ գեղներ, ռազմական կացիներ, նետեր, աղեղներ, վահաններ, նիզակներ, սրեր և այլն:

6. ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐ

Հայաստանի բոլոր շրջաններում կան կրոնական կուրտի բազմաթիվ կառուցվածքներ թե հեթանոսական և թե քրիստոնեական շրջաններից: Այդ կրոնական հուշարձաններն են՝ յեկեղեղներ-վանքեր, մատուռներ, ուխտատեղիներ յեվ խաչարձաններ: Թանգարանների ցուցադրումների

մեջ պետք է տեղ բռնեն անցյալ դարերի ճարտարապետական այնպիսի հուշարձաններ, ինչպիսին են I—XII դարերից մեզ հասած Գառնին, Գեղարդը՝ Կոտայքի շրջանում, Գոշափանքը, Հաղարծինը, Զուլխտակ վանքը՝ Դիլիջանի շրջանում, Ռհանավանքը, Ամբերդը՝ Աշտարակի շրջանում, ինչպես և մյուս շրջաններում գտնվող պատմական անցյալի բազմաթիվ հուշարձանները:

Այդ հուշարձանները կարելի է ցուցադրել լուսանկարներով կամ մակետներով, բայց վերոհիշյալ մակետներ պատրաստելը դժվար գործ է, ապա ուրեմն այս դեպքում ցուցադրման միակ ձևը մնում է լուսանկարները:

Յուրաքանչյուր հուշարձան ցուցադրելիս պետք է տալ նրա համառոտ նկարագրությունը, նշելով կառուցման թիվը, կառուցողը, հուշարձանի ճարտարապետական նշանակությունը և այլն:

7. ՔԱՆԴԱԿԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆ ՅԵՎ ՆԿԱՐԶՈՒԹՅՈՒՆ

Քանդակագործության և նկարչության համաշխարհային նշանակություն ունեցող բազմաթիվ կոթողներ կան մեր յերկրում, որինակ՝ Գառնիի հեթանոսական տաճարը, վանքերը (Կեչառիսի վանքերը, Գեղարդը, Զվարթնոցը և այլն),

վորոնք պահել են քանդակագործության և նրկարչության վերաբերյալ շատ նյութեր ինչպես, Փրեսկեներ, վորմանկարներ, հին յուղաներկ նրկարներ, վիմաքանդակներ, զանազան լեզուներով հին արձանագրություններ, խաչաքարեր, տապանաքարեր, այլ և այլ կոթողներ և այլն: Այս բոլորը պետք է խնամքով հավաքել և, ինչ հնարավոր է, պետք է տեղափոխել թանգարան, իսկ այն, ինչ հնարավոր չէ, թանգարանի այս բաժնում ցուցադրվում է միմիայն լուսանկարներով, որինակ՝ արձանագրություններ (խաչական, արամեական, հունական). ի հարկե նրանք աժեն դեպքում տեղափոխել հնարավոր չէ, այս դեպքում պետք է ցուցադրել արձանագրությունների եստամպաժները և վերծանումները:

8. ԳՐԱՎՈՐ ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆՆԵՐ

Այս յենթաբաժնում պետք է ցուցադրել ժայռագրություններ, հին ձեռագրերի նմայիլներ, արխիվային վավերագրեր և այլն: Անհրաժեշտ կրկինի այստեղ յուրջ ուշադրություն դարձնել հակակրոնական պրոպագանդայի վրա և բազմաթիվ հմայիլներ և վավերագրեր ոգտագործել՝ կրոնի հակաժողովրդական եյությունը և յեկեղեցու շահագործողական դերը ցույց տալու համար:

9. ԹԱՆԳԱՐԱՆՈՒՄ ՊԵՏՔ Ե ՅՈՒ- ՅԱԴՐԵԼ ՆԱՅԵՎ ՇՐՋԱՆԻ ԱՆՅՅԱԼ ՊԱՏՄՈՒԹՅԱՆԸ ՎԵՐԱԲԵՐՈՂ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Անա հիմնականում այսպես պետք է լինի շրջանային հնագիտական թանգարանի պրոֆիլը և այս ձևով պետք է կառուցված լինի վողջ գիտական եքսպոզիցիան:

Զպետք է մոռանալ նաև, վոր պատմա-հնագիտական արժեք ունեցող բոլոր տեսակի իրերը որենքույ համառվում են պեճական սեփականություն, ուստի վոչ մի արգելք ու խոչընդոտ չի կարող լինել այդ իրերը հավաքելու գործում:

Պետք է հավաքել և ցուցադրել թանգարանում ընդհանրապես անցյալից մնացած ամեն մի առարկա, վորը գավառագիտական-պատմական, ազգագրական, հնագիտական վորևե արժեք ունի:

Շրջանային հնագիտական թանգարանի այս սխեման ավելի կոնկրետացնելով և յեղակետ ունենալով յուրաքանչյուր շրջանի առանձնահատկությունները, պետք է ըստ այնմ կազմել տրվյալ շրջանի թանգարանի ցուցադրման տարեկան պլանը:

Իհարկե, այդ աշխատանքը կատարողը պետք

է լավ ծանոթ լինի շրջանի անցյալ պատմությանը, հուշարձաններին:

Իսկ պատմական հուշարձանների պահպանության շրջանային հրահանգիչը, վորը միաժամանակ հանդիսանալու չե նաև թանգարանի ղեկավարը, պետք է լինի պատմաբան և քաջ ծանոթ իր շրջանի պատմական անցյալին և հուշարձաններին: Այլապես, նա թանգարան ղեկավարել չի կարող:

Անշուշտ, այս գործում խոշոր անելիքներ ունեն կենտրոնական թանգարանների և պատմական հուշարձանների պահպանության հանրապետական կոմիտեյի գիտական աշխատողները, վորոնք պարտավոր են հաճախակի ոգնությունը, ցուցումներով ոժանդակել շրջաններին՝ այս պատասխանատու և շատ կարևոր գործը անհրաժեշտ լրջությամբ կազմակերպելու համար:

Անա հենց այսպիսի թանգարանների կազմակերպումը պատմական հուշարձանների պահպանության գործի եյուրյունն է կազմում: Այլ կերպ ասած, ել ինչնվ կարող եր արտահայտվել պատմական հուշարձանների պահպանությունը:

Թանգարանը լինելու է այն հիմնարկը, վորն իր շուրջը համախմբելով լայն մասսաններ և մեր յերկրի անցյալ կուլտուրայի, ճարտարապետական կոթողների ուսումնասիրության շուրջը

կազմակերպելով լայն հասարակայնություն, կապահովի լույս միայն հնությունների պահպանության գործը, այլև կստեղծի մեր սքանչելի հայրենիքն ուսումնասիրող բոցավառ հայրենասերների մի պատկառելի ակտիվ:

Այս դեպքում՝ մեր մասսաներն ավելի լավ կգնահատեն և ավելի լուրջ, ուշադրությամբ կսկսեն պահպանել նյութական կուլտուրայի հոյակապ հուշարձանները:

Սա կլինի հուշարձանների իսկական պահպանությունը:

ՆԱԽԱԳԻՄ

ԱՇՏԱՐԱԿԻ ՇՐՋԱՆԱՅԻՆ ՀՆԱԳԻՏԱԿԱՆ-ՊԱՏՄԱԿԱՆ ԹԱՆԳԱՐԱՆԻ ՑՈՒՑԱԴՐՈՒՄՆԵՐԻ ՊԼԱՆԸ

1. Հնագիտական-պատմական թանգարանը կազմակերպել Կարմրավորում, վորը 7-րդ դարի հետաքրքիր հուշարձաններից մեկն է:

2. Հնագիտական-պատմական թանգարանի ցուցադրական մասը կազմել լեռնք բաժիններից՝ I. ներածական II. նախնադարյան և III. ֆեոդալական:

I. ՆԵՐԱԾԱԿԱՆ — ԱՇՏԱՐԱԿԻ ԺԱՄԱՆԱԿԱՆ
ԳՐՈՒԹՅՈՒՆԸ ՅԵՎ ՔԱՐՏԵԶԸ:

II. ՆԱԽՆԱԴԱՐՑԱՆ — ՀԱՄԱՅՆԱԿԱՆ ՇՐՋԱՆԻ
ԲԱԺՆՈՒՄ ԺԱՄԱՆԱԿԱԳՐԱԿԱՆ ԿԱՐԳՈՎ
ՑՈՒՑԱԴՐԵԼ:

ա) Վիշապներ (լուսանկարներով կամ չափազրություններով):

բ) Դամբարաններից դուրս յեկած գործիքներ և զարդարանքներ իրենց կոմպլեքսով:

գ) Տոհմատիրական բերդչեններից մեկի (Նազրեվանի) հատակագիծը և լուսանկարները:

դ) Այծագրերը և նրանց մասին բացատրա-
գրեր:

ե) Արագածի հին շրաբաշխական սխառեմը:

զ) Աշտարակի շրջանի մեդալիթյան հուշար-
ձանները (լուսանկարներով):

Խալդական հուշարձաններ

ա) Բացատրագիր խալդական նվաճումների և
Աշտարակի շրջանում յեղած խալդական հուշար-
ձանների մասին:

բ) «Քարե արկղներ» դամբարաններից ստա-
ցած իրեր, (բրոնզե և յերկաթե դործիքներ,
դենքեր և զարդարանքներ):

գ) Թալիշի սեպագիր արձանագրությունը:

III. ՖԵՈՂԱԼԱԿԱՆ ՇՐՋԱՆԻ ԲԱԺՆՈՒՄ

ՅՈՒՅԱԴՐԵԼ

Լուսանկարներ, գիպսե ձուլածոներ և բեկոր-
ներ հետեյալ հուշարձաններից.

ա) Աղցի IV—V դարի բարձրաքանդակները,
փորոնք դրված են Արշակունի թագավորների դամ-
բարանների վրա:

բ) Յեկեղեցիների լուսանկարները և չափա-
զրական նյութերը.

գ) Մեսրոպ Մաշտոցի գերեզմանը Ոշականում
(V դար, լուսանկարը):

դ) VII դարի հուշարձանների (Թալիշ, Կարմրա-
փոր, Կոշ, Գրիգոր Մամիկոնյան) լուսանկարները,
բեկորները և ճարտարապետական մասերը:

յե) Ուշի, Բյուրական, Ամբերդ—բեկորներ, X
դարի հուշարձանների լուսանկարներ, չափա-
զրություններ:

զ) X—XII—XIV դարերի հուշարձանների (Կոշ,
Փարբի, Ոհանավանք, Սաղմոսավանք, Մարինե,
Յեղվարդի յեռահարկ հուշարձան և այլն) բե-
կորներ և լուսանկարներ:

ե) XVI—XVII դարի հուշարձանների (Կարբի,
Մուղնի) բեկորներ, լուսանկարներ:

ը) Յուզագրվում են կարևոր արձանագրությու-
նների աշխարհաբար թարգմանությունները—առա-
ջին հերթին՝ Ամբերդի.—Ամբերդն արարներից
գրավելու մասին, Զաքարյանների կոթողը:

Մի քանի կարևոր պատմական արձանա-
գրություններ (Ոհանավանք, Բյուրական, Թալիշ—
Մամիկոնյանի և այլն (VII—XIII դարերին պատ-
կանող):

թ) Ֆեոդալական դարաշրջանի պատմության
բացատրագրերը:

ժ) Ֆեոդալական դարաշրջանի ճարտարապե-
տության բացատրագրերը:

ժա) Մեծ վանքերի՝ իբրև հոգեվոր ֆեոդալ-
ներ հանդես գալու մասին բացատրագրեր:

Ժբ) Շրջանի հնագիտական քարտեզը, վորի վրա
ցույց են տրվում նաև շրջանում կատարված
հնագիտական աշխատանքները*):

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Ալիշան. «Այրարատ»:
2. Շահխաթունյան, «Ստորագրություն Կաթողիկե
Եջմիածնի և հինգ գաւառացի Այրարատոյ». հտ. 2-րդ:
3. Զաքարիա Սարկավազ—Պատմություն:
4. Կոմիտեյի ղեկուցագիրը և ուղեցույց ալբոմ:
5. Կոռտանյանց. «Վիմական տարեգիր»:
6. Նփրիկյան. Բնաշխարհիկ բառարան:

*) Այս պլանը կազմել է ընկ. Կ. Ղաֆառարյանը և հաստատ-
ված է ՊՀՊ կոմիտեյի կողմից:

ՔԱՂՎԱԾՔ

ՀԱՅԿԱԿԱՆ ԽՍՀ ԼՈՒՍԺՈՂԿՈՄԱՏԻ ԿՈՒԵԳԻԱՅԻ
1939 թ., 20-Ը ՆՈՅԵՄԲԵՐԻ, ԱՐՁ. № 23, ԿԵՏ. 18

ԼՍԵՑԻՆ.— Պատմական հուշարձանների պահ-
պանության մասին. գեկ. ընկ. Վ. Դարյան:

ՎՈՐՈՇԵՑԻՆ.— 1. Առաջարկել բոլոր ժողկրթբաժ-
վարներին, համաձայն Հայկական ԽՍՀ Ժող-
կոմխորհի վորոշման՝ նախկին յեկեղեցիների
գույքը շրջկենտրոն հավաքելուց հետո ժա-
մանակին իրազեկ դարձնեն այդ մասին
Լուսժողկոմատին: Գույքի ստուգման և թան-
գարանների մեջ բաշխելու աշխատանքների
կազմակերպումը ղենել ՊՀՊ-ի կոմիտեյի վրա:
Պարտավորեցնել կոմիտեյին, համաձայն
Ժողկոմխորհի վորոշման ավարտել այդ աշ-
խատանքները մինչև ս. թ. դեկտեմբերի 31-ը:
2. Առաջարկել ՊՀՊ կոմիտեյին, հնադա-
րան-թանգարաններ կազմակերպել հետևյալ
շրջաններում՝ Ալավերդի-Ախթալա, Սևան,
Ծաղկաձոր, Կիրովական, Աշտարակ, Ստեփա-

նախն, Գորիս, Ն. Բայազետ, Դիլիշան:

3. Ունենալ բոլոր հուշարձանների վերաբերյալ բացատրականներ:

4. ՊէՊ շրջհրահանգիչների վերակը բարձրացնելու համար կազմակերպել վերակա-վորման կուրսեր ս. թ. գեկտեմբերի 1-ից մինչև 15-ը:

5. Բոլոր պատմական հուշարձանները ձևավորել հակակրոնական բովանդակու-թյամբ:

6. Սերտ կապ պահպանել անաստվածների միության հետ, ոժանդակել նրանց հակակը-րոնական պրոպագանդայի գործում, հուշար-ձանների շուրջը հակակրոնական աշխատանք տանել — զեկուցումներ, ցուցահանդեսներ կազմակերպել և այլն:

Նախագահ՝ Բ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

Քարտուղար՝ Ս. ՃԱՆՃԻԿՅԱՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ԽՍՀ ԼՈՒՍԺՈՂԿՈՄՍՏԻ ՊԱՏՄԱԿԱՆ ՀՈՒ-
ՇԱՐՁԱՆՆԵՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵՅԻ ՅԵՎ
ԳԱՎՍՈՒԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅԱՄԻ
ԼՈՒՅՍ ԵՆ ՏԵՍԵԼ ՀԵՏԵՎՅԱԼ ԳՐԲԵՐԸ

1. Դառնի-Գեղարդ, ուղեցույց ալբոմ 46 էջ, գի-նը 4 ռ.
2. Դիլիշանի շրջանի հուշարձանները — ուղե-ցույց ալբոմ. 38 էջ, գինը 4 ռ.
3. Վաղարշապատի շրջանի հուշարձանները — ուղե-ցույց ալբոմ. 28 էջ, գինը 4 ռ.
4. Աշտարակի շրջանի հուշարձանները — ուղե-ցույց ալբոմ. 48 էջ, գինը 5 ռ. 50 կ.
5. Վ. Դարյանի — Հնագիտական թանգարանները և պատմական հուշարձանների պահա-նության խնդիրները. 40 էջ, գինը 1 ռ.
6. Վ. Դարյանի — Ծաղկունիք — պատմական համա-ռոտ ակնարկ պատանիների համար. 40 էջ, գինը 1 ռ. 20 կ.
7. Վ. Դարյանի — Խորհրդային Գավառագիտու-թյունը և դպրոցը. 40 էջ, գինը 30 կ.
8. Վ. Դարյանի — Խորհրդային գավառագիտու-թյան խնդիրները. 72 էջ, գինը 1 ռուբ.
9. Վ. Դարյանի — Խորհրդային գավառագիտու-թյունը և քաղլուսնիմարկները. 20 էջ, գինը 20 կ.

ՊԱՏՐԱՍ ԵՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

1. Գործիսի—Սիսիանի շրջանների հուշարձանները—ուղեցույց ալբոմ.
2. Իջեվանի շրջանի հուշարձանները—ուղեցույց ալբոմ.
3. Ալավերդու շրջանի հուշարձանները—ուղեցույց ալբոմ.
4. Վ. Դարյանի՝ Արաղած. պատմա-աշխարհագրական հանրամատչելի ակնարկ:



Տեխ. խմբադիր և սրբադրել Վ. Պողոսյան
Պատվեր № 163. Տիրած 1500
Դրավիտի լիազոր՝ Բ—1097

Հայկական ԽՍՀ Պետհրատի I տպարան, Լենինի փ. № 65

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՐԹԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՄԻՆԻՍՏԵՐՈՒԹՅԱՆ
ԿՐԹԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐԱԼ ԿՈՄԻՏԵ

Դաս	Դասի անուն	Դասի համար	Դասի տեսակ	Դասի քանակ
1	Հայաստանի հանրապետության պատմություն	1	Հայաստանի հանրապետության պատմություն	1
2	Հայաստանի հանրապետության պատմություն	2	Հայաստանի հանրապետության պատմություն	2
3	Հայաստանի հանրապետության պատմություն	3	Հայաստանի հանրապետության պատմություն	3
4	Հայաստանի հանրապետության պատմություն	4	Հայաստանի հանրապետության պատմություն	4
5	Հայաստանի հանրապետության պատմություն	5	Հայաստանի հանրապետության պատմություն	5
6	Հայաստանի հանրապետության պատմություն	6	Հայաստանի հանրապետության պատմություն	6
7	Հայաստանի հանրապետության պատմություն	7	Հայաստանի հանրապետության պատմություն	7
8	Հայաստանի հանրապետության պատմություն	8	Հայաստանի հանրապետության պատմություն	8
9	Հայաստանի հանրապետության պատմություն	9	Հայաստանի հանրապետության պատմություն	9
10	Հայաստանի հանրապետության պատմություն	10	Հայաստանի հանրապետության պատմություն	10

Հայաստանի Ազգային գրադարան



NL0429326

18933

ԳԻՆԸ 1 Ռ.

В. ДАРЬЯН
Археологические музеи
и
задачи охраны исторических
памятников
Арм. ССР, Ереван 1940 г.